ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«5» դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-91/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2016թ. թիվ 03/73-3/26165-16 գրությամբ ներկայացված «Քամ են Գո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00858165) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 25.08.2016թ. թիվ 1/73-3/20986-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին

(այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Քամ են Գո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև նաև՝ Պատվիրատու) 19.08.2016թ. ԴՎԱ/2477 գրության պատճենը:

Կենտրոնը 08.11.2016թ. թիվ 01/04.1/4029-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 25.08.2016թ. թիվ 1/73-3/20986-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալ չի ներկայացրել, ուստի ՀՀ ֆինանսների նախարարության 25.08.2016թ. թիվ 1/73-3/20986-16 գրությամբ ներկայացված «Քամ են Գո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.11.2016թ. թիվ 03/73-3/26165-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ նկատի ունենալով, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/71» գնման ընթացակարգի շրջանակներում «Քամ են Գո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 26.07.2016թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, անհրաժեշտ է նախաձեռնել «Քամ են Գո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. «Քամ են Գո » ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Քամ են Գո» ՍՊԸ-ն 07.11.2016թ. թիվ 09/8935-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ ՊՆ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/71» մրցույթին, հետագայում հանձնաժողովից տեղեկացել է, որ Ընկերության հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 26.07.2016թ., ՀՀ

պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների պատճառով:

Ընկերությունը հայտնել է, որ հայտը ներկայացնելուց առաջ կատարել է համապատասխան հարկային վճարումները, որը կազմել է 2,704,000 ՀՀ դրամ, որը սակայն բանկի կողմից ուշ է փոխանցվել:

Ընկերությունը նույն գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության 03.11.2016թ. թիվ 6102 տեղեկանքը, համաձայն որի «Քամ են Գո» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 2016թ. հուլիսի 26-ի դրությամբ ունեցած հարկային պարտավորությունը կազմում է **2,689,205 *ՀՀ դրամ՝ 1,231,339 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով, 1,280,104 ՀՀ դրամ շահութահարկի գծով, 177,762 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով:***

«Քամ են Գո» ՍՊԸ-ն նույն գրությամբ Կենտրոնին է ներկայացրել նաև «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված կանխիկ մուծման թիվ 160726058036044, թիվ 160726058191044, թիվ 160726057912044 կտրոնները համաձայն որոնց «Քամ են Գո» ՍՊԸ-ն ***26.07.2016թ.*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցել՝ ***1,238,000 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ի վճարման նպատակով, 1,287,000 ՀՀ դրամ գումար՝ շահութահարկի վճարման նպատակով և 179,000 ՀՀ դրամ գումար՝ եկամտային հարկի վճարման նպատակով:***

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ «Քամ են Գո» ՍՊԸ-ն խնդրել է ընկերությանը չներառել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և թույլատրել մասնակցելու հետագա մրցույթներին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 01.12.2016թ. ժամը 17:00-ին ՍՑ-ԳԲԽ-91/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Քամ են Գո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ հայտը ներկայացնելուց առաջ կատարել է համապատասխան հարկային վճարումները, որը սակայն բանկի կողմից, ըստ երևույթին, ուշ է փոխանցվել հաշվին, իսկ համապատասխան ապացույցները՝ մուծման կտրոնները, արդեն իսկ ներկայացրել են Կենտրոնին, ուստի խնդրել է ընկերությանը չներառել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 19.08.2016թ. ԴՎԱ/2477 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/71» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգով «Քամ են Գո» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ և Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացության համաձայն «Քամ են Գո» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ է ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Քամ են Գո» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 01.12.2016թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-91/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2016թ. թիվ 03/73-3/26165-16 գրությամբ ներկայացված «Քամ են Գո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/71» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով **26.07.2016թ.** հայտ է ներկայացրել «Քամ են Գո» ՍՊԸ-ն:

2. «Քամ են Գո» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 26.07.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 01.08.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Քամ են Գո» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Քամ են Գո» ՍՊԸ-ն 2016թ. հուլիսի 26-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 2,689,205 ՀՀ դրամի չափով:

5. «Քամ են Գո» ՍՊԸ-ն 07.11.2016թ. թիվ 09/8935-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության 03.11.2016թ. թիվ 6102 տեղեկանքը, համաձայն որի «Քամ են Գո» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 2016թ. հուլիսի 26-ի դրությամբ ունեցած հարկային պարտավորությունը կազմում է **2,689,205** ***ՀՀ դրամ՝ 1,231,339 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով, 1,280,104 ՀՀ դրամ շահութահարկի գծով, 177,762 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով:***

6. «Քամ են Գո» ՍՊԸ-ն նույն գրությամբ Կենտրոնին է ներկայացրել նաև «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված կանխիկ մուծման թիվ 160726058036044, թիվ 160726058191044, թիվ 160726057912044 կտրոնները համաձայն որոնց «Քամ են Գո» ՍՊԸ-ն ***26.07.2016թ.*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցել՝ ***1,238,000 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ի վճարման նպատակով, 1,287,000 ՀՀ դրամ գումար՝ շահութահարկի վճարման նպատակով և 179,000 ՀՀ դրամ գումար՝ եկամտային հարկի վճարման նպատակով:***

5. ՍՑ-ԳԲԽ-91/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.08.2016թ. թիվ 1/73-3/20986-16 և 24.11.2016թ. թիվ 03/73-3/26165-16 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 19.08.2016թ. ԴՎԱ/2477 գրությունը, «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 07.11.2016թ. թիվ 09/8935-16 գրությամբ Կենտրոնին ներկայացված ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության 03.11.2016թ. թիվ 6102 տեղեկանքը, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված կանխիկ մուծման թիվ 160726058036044, թիվ 160726058191044, թիվ 160726057912044 կտրոնները, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), հայտնում է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է ***կեղծ փվյալ:***

«Քամ են Գո» ՍՊԸ-ն 07.11.2016թ. թիվ 09/8935-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության 03.11.2016թ. թիվ 6102 տեղեկանքը, համաձայն որի «Քամ են Գո» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 2016թ. հուլիսի 26-ի դրությամբ ունեցած հարկային պարտավորությունը կազմում է **2,689,205** ***ՀՀ դրամ՝ 1,231,339 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով, 1,280,104 ՀՀ դրամ շահութահարկի գծով, 177,762 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով:***

«Քամ են Գո» ՍՊԸ-ն նույն գրությամբ Կենտրոնին է ներկայացրել նաև «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված կանխիկ մուծման թիվ 160726058036044, թիվ 160726058191044, թիվ 160726057912044 կտրոնները համաձայն որոնց «Քամ են Գո» ՍՊԸ-ն ***26.07.2016թ.*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցել՝ ***1,238,000 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ի վճարման նպատակով, 1,287,000 ՀՀ դրամ գումար՝ շահութահարկի վճարման նպատակով և 179,000 ՀՀ դրամ գումար՝ եկամտային հարկի վճարման նպատակով:***

Կենտրոնը գտնում է, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 26.07.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում է Մասնակցի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ***կեղծ տվյալի ներկայացում***, քանի որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված կանխիկ մուծման թիվ 160726058036044, թիվ 160726058191044 և թիվ 160726057912044 կտրոնների ուսումնասիրությունից երևում է, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացնելու օրը՝ ***26.07.2016թ.*** ՀՀ պետական բյուջե է փոխանցել 1,238,000 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գումար, 1,287,000 ՀՀ դրամ շահութահարկի գումար և 179,000 ՀՀ դրամ եկամտային հարկի գումար:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ***կեղծ տվյալի ներկայացումը*** տվյալ դեպքում առկա չէ, քանի որ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ***26.07.2016թ.*** հայտ ներկայացնելիս, համոզված է եղել, որ չունի ժամկետանց հարկային պարտավորություն, քանի որ մարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ իր ունեցած հարկային պարտավորությունները, ուստի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2016թ. թիվ 03/73-3/26165-16 գրությանը, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում «Քամ են Գո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 26.07.2016թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, ինչը հաստատվել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության կողմից, ապա այս

կապակցությամբ Կենտրոնն փաստում է, որ Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.11.2016թ. թիվ 01/04.1/4029-16 գրությամբ չի արձանագրել, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, այլ փաստել է, որ Ընկերության կողմից 26.07.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում է Մասնակցի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ***կեղծ տվյալի ներկայացում***, քանի որ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացնելու օրը՝ ***26.07.2016թ.*** ՀՀ պետական բյուջե է փոխանցել պարտքի գումար և հայտ ներկայացնելիս՝ համոզված է եղել, որ այլևս չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում չի ներկայացրել կեղծ տվյալ՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2016թ. թիվ 03/73-3/26165-16 գրությամբ «Քամ են Գո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00858165) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել՝ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-91/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դավթյան